Ծանոթանում են ԼՂՀ հիմնախնդիրներին

ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանն օրերս ընդունել է Լոնդոնի Քինջս քոլեջի դասախոսներ, ազգագիտության ամբիոնի պրոֆեսոր Դով Լինչին եւ Էրիկ Բոդելեյրին, որոնք տարածաշրջան են ժամանել հատուկ առաքելությամբ: Ըստ ԼՂՀ կառավարության մամլո ծառայության հաղորդագրության, հյուրերին հետաքրքրում են ԽՍՀՄ փլուզումից հետո անկախության ուղի բռնած, սակայն առ այսօր չճանաչված երկրների հիմնախնդիրները: Եվ այդ համատեքստում նրանք ծանոթացել են Լեռնային Ղարաբաղի ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին, կատարել սոցիոլոգիական հետազոտություններ եւ նախատեսում են առանձին գրքով հանրությանը ներկայացնել իրենց նկատառումները: